

ԲԱԺԱՆՈՐՂ ԱԳՐՈՒԹԻՒՆ

Պաշխարհոյ համար
Տարեկան 12 ծր.
Վեցամսեայ 6 »


Արևասահմանի համար
Տարեկան 15 »
Վեցամսեայ 8 »

Ամերիկայի համար
Տարեկան 3 ծր.
Վեցամսեայ 1.50 »

ՎԱՆԻԹԻԿ ՎՃԱՐԵԼԻ

Մանուցեան տղոց անասին
երեսին համար 40 անգամ
ե. իսկ վերջին երեսի համար
20 անգամ է. երեքին
ակնի անգամներու համար
20 Օ/0 զեղը կըլլայ :

Պաշխարհոյ համար ձեռքի
(15 ՄԱՆԹԻՄ)



R. P. Kalémcarian
Mechitharistangasse W. 4
Vienne
(Autriche)

Նամակ եւ դրամ դրկեյ
մքաղաքեանս հասցեին

«Шаржумъ»
Варна.

Redaction du journal
«Charjoum»
Varna (Bulgarie)

Գրութիւնք եւ չեմ տրուի

Արևասահմանի համար ձեռքի
(20 ՄԱՆԹԻՄ)

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ
ԿՐ ԶՐԱՏԱՐԱԿՈՒԹԻ ԶՈՐԵՔԵԱԲԹԻ ԵՒ ՇՍԱՍԹ ՕՐԵՐԸ
Отговорникъ: Д-ръ Т. Хр. Стояновъ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Մեր բաժանորդներէն, որոնք
վճարած չեն, կը խնդրենք ան-
յապաղ զրկել բաժնեգրիները,
որովհետեւ առաջին վեցամսեան
լրացաւ: Բաժանորդները պէտք
է հասկնան որ թերթը ստակով
կելլայ:

Հ. Ս. ԷՓՐԻԿԵԱՆ

Պակերագարդ քնաշխարհիկ քառասուն
Այս հոյակապ գործին Բ. պրակն
ալ հրատարակուած է:
Ա. պրակ զարգարուած 80 պատ-
կերներով:
Բ. պրակ զարգարուած 91 պատ-
կերներով:
Իւրաքանչիւր պրակ ճամբու ծախ-
սով կարժէ 3 ֆրանք:
Հասցէ՝
Imprimerie Armenienne St. Lazare
(Italie) Venise

Յ. Կ. ԲԱՍՄԱՉԵԱՆ

Բանասէր
Այս եռամսեայ հանգէսին Բ. հա-
տորի Ա. պրակը հրատարակուած է:
Բանասէրի տարեկան գինն է 20
ֆրանք. մէկ գիրքը 6 ֆրանք:
Հասցէ՝
Basmadjian
112 Bd. Rochechouart Paris

Ա Ձ Դ

ԼՈՅՍ ՏԵՍԱԻ Յ. Կ. ՊՕՆՃՈՒԲԵԱՆԻ
Նոր Հնթերցարան
Բ. ՏԱՐԻ
ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ
Նոր-Հնթերցարանի այս Բ. տարին
ալ պիտի գտնէ անտարակոյս այն
ընդունելութիւնը, որուն արժանա-
ցաւ Ա. տարին, եւ որուն ուղղու-
թեամբը պատրաստուած է արդէն:
Գինն է 1 ֆրանք. գոնէ 20 օրի-
նակ գնողներու համար 15 Օ/0 զեղը:
Դիմել հետեւեալ հասցէին՝
Յ. Կ. Պոնճուբեան
(Պուլկարիա) Վառնայ
Մանթ. — Գ. տարին լոյս պիտի
տեսնէ յառաջիկայ Սեպտեմբեր ամ-
սոյ սկիզբը:

ԱՆ ՉԵՆՔ ԽԱԲՈՒԹԻՐ

Արտասահմանի մէջ հայերու
ստուար թիւ մը ունինք, որոնք
կը ջանան միշտ խոյս տալ ազ-
գային դատի համար նորանոր
զոհողութիւններ ընելէ. առար-
կելով թէ անցեալին մէջ լիով
կատարած են իրենց պարտաւա-
նութիւնները, իրենց կարողու-
թեան չափով նիւթապէս և բա-
րոյապէս ստատարած են այսինչ
կամ այնինչ հաստատութեան,
բայց յետոյ տեսնելով որ չարա-
չար խաբուած են եղեր և հետե-
ւաբար՝ ալ չեն խաբուիր:

Երբեք յաւակնութիւնը չունիմ
կարծելու՝ թէ մեր յեղափոխական
գործիչներն ու գործունէութիւն-
ները բնաւ չունեցան իրենց պա-
կաս կողմերը, և կամ անոնց մէջ
երբեք զեղծում մը չէ կատար-
ուած: Բայց ինչ զարմանալի
արամբանութիւն է մեր արա-
մարանութիւնը, որ պակասի մը
կամ ենթադրուած զեղծումի մը
գիմաց կատարուած բուն յեղա-
փոխական գործերն ու անձնազո-
հութիւնները կանտեսենք:

Ինչո՞ւ համար հոս անհատի մը
մէկ կասկածու քայլը կամ տգեղ
վարմունքը մեզ պաղծեցնէ. մինչ-
դեռ անգին տասը հատ ինք-
նանուէր մարդիկներ զէնքը ձեռ-
քերին կիյնան պատերազմի
դաշտը:

Ես կը կասկած լիմ՝ որ շատերուն
ալ չենք խաբուիրը լոկ պա-
րուակ մըն է ինքզինքնին ամէն
պատասխանատուութենէ ու պար-
տականութենէ ազատ պահելու:

Ու շատ ալ հոգ ընելիք բան
չէ, երբ ըսողը ինքնասէր հա-
րուստն է. որովհետեւ անի բնաւ
խաբուած չունի, և իր դուռը ամ
առնող գործիչը հազար անգամ
խաբած խաբխիւած է. և լաւ
գիտէ որ իր տուած ոսկիներուն
թուովը յեղափոխականներ ինչեւ
են կուռելով:

Ալ չենք խաբուիր. բնաւ կա-
րեւորութիւն չունի երբ ըսողը
հայ խելացին, կարծուած քա-
ղաքագէտն է, որովհետեւ թէ
անցեալին և թէ ներկային մէջ

ան շատ քիչ հետաքրքրուած է
ազգային կեանքով ու հարցով, և
ան ալ միմիայն յաջողութեան
յոյսերով լեցուն օրերու մէջ, ա-
ժանագին գափնի մը խելաւ տե-
ղանքով:

Ալ չենք խաբուիր, թող կրկ-
նեն ու կրկնեն բոլոր ինքնակոչ
հերոսները ու մակարոյժ յեղա-
փոխականները. թող մութին ու
մոռացութեան մէջ ակունքին կր-
ճըրացնեն և ջանան քանդելու
ինչ որ երեկ կը շինէին, այրելու
ինչ որ կը պաշտէին:

Բայց ցաւելով կը տեսնեմ որ,
ալ չենք խաբուիրի այդ հիւանդ
ու ցատազար երեւոյթը կամաց
կամաց կը տարածուի և կարմա-
տանայ նաեւ մեր Հայաստանցի,
զաղթական ժողովրդեան մէկ մա-
սին մէջն ալ ու երբ անոնց կեր-
թաս փրկարար խորհուրդ մը,
ինքնոգնութեան դաս մը տալու,
կը գտնուին մարդիկ, որ յան-
կարձ անվտանգ աչքերով երեսիդ
կը նային ու կըսեն պաղ պաղ «Ալ
չենք խաբուիր»:

Ալ չենք խաբուիր, օրհասա-
կանի մը վերջին շունչին չի՞ նմա-
նիր ատի. մահամբձի մը ան-
զգայութիւնը չէ՞ իր ցաւերուն:

Ալ չենք խաբուիր, որչափ
սիրտ ծակող է այդ. երբ ըսողը
Հայաստանցի եղբայրը, խեղճ
չարչրկուող մշակը կամ բեռնա-
կիրն է. որուն կիրն կանպատուեն,
աղջիկը կառեւանգեն և ժիժերը
անթի կը մեռնեն անգին:

Ալ չենք խաբուիր, յուսահա-
տեցնող, խենթեցնող է ատի երբ
ըսողն է Հայրենիքի կարիճ, ե-
րիտասարդ զաւակը, որ պէտք է
անոր կրած անցեալ և ներկայ
չարչարանքներուն վրէժը լու-
ծէ:

Ալ չենք խաբուիր... ու ի-
թեւերը ծալած կը նստի անկիւն
մը, խելակորոյս ու մոլորած ա-
յէն ու ձախէն եկած յիմարա-
կան խօսքերէ և բոլորովին ան-
տարբեր կը մնայ հայրենիքի, իր
և իրեններուն փրկութեանը նուի-
րուած գործին:

Ալ չենք խաբուիր... Ձէ՛,
մարտիրոս հայրենիքի երիցս
մարտիրոս զաւակ, չէ Հայաս-

տանցի ախպարիկ. բաղդախըն-
դիրներու խօսքերովը թունա-
ւորուած, յեղափոխականէն ու
յեղափոխութենէն հեռու մնալովդ
է որ կը խաբուի, և ան ալ չա-
րաչար կերպով:

ՎԱԶՍՆ ՄԱՆՈՒԷԼԵԱՆ

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

Կ. ՊՕԼԻՍ, 29 Յունիս

Հայու արիւնոտ խոցերուն վրայ
մէկ նոր խոց ալ աւելցաւ, անոր
մարտիրոսութեան պատմութեան
վրայ արիւնոտ երես մըն ալ
շատցաւ:

Գոյժը հասաւ հոս այս վերջին
քանի մը օրերս:

Գործողութեան վայրն է Բաղէ-
շի վիլայէթը և յատկապէս Սա-
սուն գաւառը:

Սասուն ու Ձէյթուն երկու ծա-
կող փուշեր են դարձեր Համիտի
կուրնալիք աչքերուն: Ամէն
գոթխային հնար կը գործադրէ
ջնջել աղ երկու գաւառներու հա-
յութիւնը, Ձէյթուն աւելի մօտ
է ծովին, աւելի դիւրաւ ենթա-
կայ է Եւրոպական քաղաքագէտ-
ներու անսիրտ ու պոռնիկ աչքե-
րուն, Ձէյթունցին զէնք ունի
անառիկ դիւքեր ունի...

Ու ատոր համար Համիտ կը վախ-
նայ հոն ջարդի հրաման զրկել:
Եթէ շատ նեղուի քաջ Ուլնեցին
լեռը կը քաշուի, կապտամբուի՞ և
զայն զսպելը՝ ինչպէս զէպքերը
ցոյց տուին՝ շատ ալ դիւրին չէ:
Հոն Եւրոպացին դիւրաւ կը մի-
ջամտէ:

Ատոր համար Համիտ հոն բըռ-
ներ է տարբեր աղուէսական ըն-
թացք մը. աղքատութիւնը հասց-
նել սպանիչ չափերու և «մուհա-
ճիրներով», մահմէտական գաղ-
թականներով լեցնել այդ կողմե-
րը մինչեւ այն աստիճան, որ
նոր եկող աղ գազանական արիւն-
կըզակ տարրը և աղքատութիւնը
իրարու հետ միացած՝ օր մը մա-
չեն, ոչնչացնեն Ուլնիոյ հայու-
թիւնը, հոն ալ ջարդի հնարա-
ւորութիւն տան:

Իսկ Սասուն: Տարբեր է հոն վրձակը, ծովերէ հեռու, Եւրոպայի աչքէն ծածկուած, միջամտութեան և օգնութեան ամէն յոյսէ զրկուած, ծայրագոյն աստիճանի ազբատութեան մէջ գայարուող, քրդերով և չորրորդ զօրարանակով շրջապատուած: Ահա Սասուն: Միակ պետութիւն մը որ կրնայ օգնութեան հասնիլ, ան ալ Ռուսիան է, որու «քնքոյշ զգացմունքները» դէպի հայերը և դէպի Հայաստան ամէն մարդու յայտնի է:

Աւ 1894էն ի վեր տարի մը, ամիս մը չէ անցեր՝ որ Սասնոյ մէջ ու և է արիւնահեղութիւն, ու և է սպաննութիւն կողոպուտ կամ ջարդ չըլլայ:

Աւ այսօր կրկին այդ ափ մը լեռնցի կարիճներու գաւառն է որ մեր մարտիրոսութեան պատմութեան վրայ արիւնոտ էլ մըն կաւելցնէ:

Թուականէս 5-6 օր առաջ տեղւոյս թէ կառավարութիւնը, թէ բոլոր դեսպանները հեռագիրներ ստացած են Բաղէչէն: Որչափ կրցի իմանալ ասոնց բովանդակութիւնը հետեւեալն է:

Բաղէչի զինուորական հրամանատար Ալի փաշան՝ կանոնաւոր զօրքերով ու Համիտական քիւրտերով կը յարձակի Սասնոյ շրջակաները Սպաղանք գիւղին վրայ իբր թէ հոն յեղափոխականներ որոնելու: Գիւղի մէջ ոչինչ չի գտնար:

Գիւղին բոլոր պատուաւոր անձերը կը կանչէ հարցաքննութեան և անոնցմէ յեղափոխականներ կը պահանջէ: Ինչպէս նաեւ գիւղացիները կը պատասխանեն. հոս չկայ եթէ կայ, դոէք առէք տարէք:

Փաշան զայրանալով՝ գիւղը քանի մը տեղէն կրակի կուտայ և բնակիչներէն 200 մարդ, ծեր,

կին, երախայ որէ կանցնէ, Եկեղեցիքի ալիարէ, նրու մէջ 18 հոգի ապաստանած կըլլան 80 ամենայն ձերբակալութեան հետ միասին: Ավէնքն ալ միսիբ կը դառնան Եկեղեցիքի փլատակներուն մէջ: Գիւղի քահանային կինը որ յղի է եղբր կենթարկուի ծանր անպատուութեան և ի վերջոյ կը նահատակուի: Արիւնի հոտէն զաղանացած հրէշները կը յարձակին Սպաղանքի քովերը եզած 3 հայ գիւղերու վրայ և զանոնք ալ կը կողոպտեն, եղած չեղածնին կառնեն կը տանին: Պատուոյ բռնաբարութեան շատ մը դէպքեր տեղի կունենան:

Դեսպաններուն եկած հեռագիրը այս ձևով է: Տարբեր է Ալի փաշա հրէշին տեղեկագիրը: Քառնուկ փաշան «Ֆէտայիներ» կը փնտռէ եզեր, Սպաղանքի բնակիչները դիմագրեր են, վէնքով կուրի ելեր են, ինքն ալ ազբատամբները զսպելու ելբէ է և միայն 18 հոգի սպաննուած կան հայերու կողմէն:

Կրկին կոտորած, կրկին արիւն, իսկ ասոր վախճանը...

Սէլամըքի հանդէսը կարելի է ընդ միշտ փակուած համարել օտարական հիւրերու առաջ: Օ՛չը կարծէք թէ օտարականներն բացակայ եղած պահուն «տեղացի» հիւրեր ըլլան: Տեղացիք, Համիտի հայատակները շատոնց զրկուած են իրենց վեհապետը տեսնելու սիրտ—խառնող հաճոյքէն...

Ասկէ ետքը օտարական մը կընդունուի հանդէսին միայն այն ատեն, երբ իր դեսպանի սեփական ձեռքով գրուած յանձնարարութեան քաթ մը ունենայ և դեսպանը անձնապէս պատասխանա-

տու ըլլայ ներկայացողին «վրտահելի անձ» ըլլալուն, այսինքն թէ այդ անձը պոմպա նետող անարշիթ մը չէ... Արդէն երեք շաբաթ է Սէլամըքի ատեն միայն դեսպանները և անոնց առաջին թարգմանները ներկայ կըլլան, տարբեր հիւր մը երբեք չիկայ: Աս օրքաթ օր Իտալական դեսպանի փոխանորդը իր սեփական քաթով պատուաւոր ընտանիք մը կը յանձնարարէ, բայց խեղճ այր ու կին նորէն չեն ընդունուիլ պալատի դռնէն ներս:

Աս միջադէպը խիստ գէշ տպաւորութիւն ըրու մեր տիրութեան ներս վրան: Իսկ դեսպաններու սրահին մէջ աս երեք շաբաթ է հանդէսի պահուն երկու երեք «քանոններ» (զինուորական ստիկաններ) էշու պէս կայնած կը սպասեն: Կարծես թէ դեսպաններն ալ մէյմէկ անարշիթներ են, որ պիտի Համիտի սպաննեն...

Իտալացիներն ալ ինկան հայերու փրձակին: Պոլսը փակուեցաւ Իտալացիներու առաջ: Անցեալ օր Բիրէէն 5-6 և Պաթումէն 10ի չափ Իտալացի բանաւորներ կուգան Պոլիս, ընտանիքով, զաւակներով միասին աշխատելու: Ամէնքն ալ ծովափէն կը տարուին բանաւոր անկէ ալ հետեւեալ օր շոգինաւով դուրս կը նետուին Պոլսէն: Ամէն Իտալացի անիշխանական կը համարուի... Տեսնանք թէ ի՞նչ ընթացք պիտի բռնէ Իտալական դեսպանը:

Պոլսոյ բանտերը այնչափ լեցուեր են Հայ ու Թուրք բանտարկեալներով, որ այլ եւս տեղ չէ մնացել նորերուն: Իսկ տեղ պէտք

է, անհրաժեշտ է. Օգոստոս 19ը կը մտնեայ:

Ասոր համար ալ թուականէս չորս օր առաջ 16 հայեր բանտէն հանեցին ու խիստ երաշխաւոր ներ առնելով արձակեցին: Ասոնք ամէնքն ալ «Ֆէնէրպը» բռնուած կամ թաղէ թաղ անցնելու ատեն «նիւրիսպէր» չառած. կամ «չատ պտոյտ ընելու» համար ձերբակալուած անմեղ անձեր էին: Աւագակ Տէր Կարսեան բաւական ստակ աննելով՝ բարեհաճեցաւ վերջապէս միջնորդել և ասոնք դուրս հանել:

Ոստիկանութեան և Կերքին գործոց նախարարներուն մէջ հակառակութիւն մը կայ, կաշխատին երկուքն ալ զիրար անվստահելի և անկարող ներկայացը նել Համիտի առաջ: Եւ Ֆէրք պէյ խել մը հայ ու թուրք, հրեայ ու յոյն լրտեսներով շրջապատուած, կը հատուցեն Համիտի որ հոս յեղափոխական չիկայ եւ թէ Հնչակեաններու անունով ցրուած վերջին թուղթերն անգամներ քրտնաբեր գործոց նախարարին ու անոր աջ բազուկն եղող Պիւլպիւեան էֆէնտիի գործերն են: Իսկ աս վերջիններս զիշխը ցորեկ կը տքնին Համիտը սարսափի մէջ պահել և ցոյց տալ, որ յեղափոխականներով լեցուն է Պոլիսը, միայն Եւֆէրթ թուղթ է, չի կրնար զանոնք ձերբակալել:

Իբր պայացոյց՝ ներքին գործոց նախարարի, Պիւլպիւեանի, և Սպանդարեանի, Մեւլիքեանի և այլ լրտեսներու կողմէ՝ Պոլսոյ կողմը պատերուն փակցուած կոշերը կը բաւեն: Այդ կոշերը իբր թէ «ժէօն թուրքերու» կողմէն են, կըսպառնան Համիտի գնդակով, ցուցնելով միանգամայն Հուժպէրթօ թագաւորին մահը և Պարսից Եհանի վրայ եղած փորձը: Բայց դիւրին է հասկնալ որ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

Բ Է Ք Ի Ն

Բէքին, որ կը նշանակէ «հիւսիսի մայրաքաղաք», կառուցուած աւագուա դաշտի մը մէջ, 12 մղոն հեռու է Բէյ-Հոյէն եւ աւելի քան 100 մղոն այս գետակին քերէն: Իր աշխարհագրական ճիշդ գիւղքն է հիւսիսային լայնութեան 39 աստիճան 54 մաս 36 մանրամաս, իսկ լայնութեան 116 աստիճան 27 մաս, այսինքն մոտաւորապէս հիւսիսային կիսագնդին մէջ նարոյի, իսկ հարաւային կիսագնդին մէջ Մէլպուրնի լայնութիւնը:

Կլիման աստիկ երաշտ է. բացի յուլիս ու օգոստոս ամիսներէն, որոնք անձրեաներու եղանակը կը ձևացնեն, գրէթէ երբեք չանձրեւեր Այս ժամանակամիջոցին մէջ ալ միանակ անկանոն ընդմիջումներով ջրհեղեղեան խոշորահատ անձրեաներ կը տեղան որոնք քաղաքը վտանգաւոր

ճախճախուտի մը կը վերածեն: Ճամբաները եզերուած ըլլալով խորունկ փոսերով որոնք կը ծառային իրրեւ կոյուղի, այս վերջինները իսկոյն կը յորդեն եւ՝ առանց չափազանցութեան, դուրս ելողը խղճուելու վտանգին ենթակայ է: Ամէն արի տղաք կը խղճուին այս եղանակով: Այս երկու ամիսներէն դուրս որոնք չափազանց սաքին պատճառաւ ամենէն աւելի տաժանելի են, օգր զարմանալի երաշտութիւն մը կը պահէ: Ջրայնոտ մարդիկ անմիջապէս կաղզուին անկից, եւ Բէքինի Եւրոպացիներուն զայրացկոտութեան իբրեւ պատճառ ստիկ մէջ կը բերուի շատ անգամ:

Իսկապէս երբեք եղանակ կայ միայն. ամառ, աշուն, ձմեռ. գարունը որ պիտի մինք կըմտնենք, գոյութիւն չունի, եւ աստիկ տաքերը վրայ կը հասնին ապրիլին եւ մայիսին. գրէթէ առանց փոխանցութեան. ջերմաչափը ամառը մինչեւ 41 աստիճան ցոյց կուտայ շուրջ մէջ եւ ձմեռը շատ անգամ վեհօհէ մինչեւ 20 աստիճան վար կիջնայ:

Ընդհանուր ամամբ կարելի է ըսել թէ Բէքինի քաղաքարաշխական վիճակը չափազանց սղարլի է: Փոշի

կոյտեր կամ ցետի դէզեր, աւառիկ րէքիներն փողոցի մը սովորական տարրերը:

Հովը, գարնան յոյժ յաճախակէս, այս միայնաթ դաշտին մէջ ուե է արգելքի չի հանդիպելուն մոլեգնօրէն կը փչէ եւ Բէքինի փողոցներուն մէջ սեւ ու գարշառտ փոշի յորձանքներ վեր կը հանէ: Այս քաղաքին մէջ անհնար է բոլորովին մաքուր ըլլալ, եւ զարմանալի է որ աչքի ցաւը աւելի յաճախակէս չէ եւրոպացիներուն քով:

Որովհետեւ ամէն տեսակ աղբ փողոցը կը նետուի, ամբողջ տարւոյն մէջ գարշալի բուրու մներ կան որոնք կաճին սովորական ամիսներուն, Հայրենակիցիներն մէկը դիտեմ որ չինական քաղաքին մէջ մարեցաւ ինկաւ հոտին սաստկութիւնէն: Միայն թէ քիչ քիչ կը վարժուի եւ ի վերջէ անհանգիստ չես ըլլար:

Ջուրը զրուելի է եւ պորաքով կամ անուշադրով խառնելէ ետք միայն կարելի է գործածել զայն լուացուելու:

Փոխադրութեան համար սովորական երկու միջոց կայ. ձին եւ չինական սոյլակը: Առաջինը նախա-

մեծարելի է. վասն զի այդ նախնական սոյլակներուն վրայ գաղափար մը կաղմուելու համար անոնցմէ մէկուն մէջ նստած ու չարչարուած ըլլալու է մարդ: Եթէ անխառ գուրս ելլաս, փառք տալու են: Փայտէ տեսակ մը ձագարներ կան երկու երկաթեայ մեծ անիւներու վրայ կեցած, առանց զսպանակի. ընդհանրապէս ջորիներ կը քաշին զանոնք. կծկուած կամ պոռկած միայն կարելի է. ուստի աւելի լաւ է պատգարակ նստիլ:

Պաշտօնական այցելութեանց համար գահաւորակ կը գործածեն. բայց փոխադրութեան այս միջոցը շատ սուղ է: Գրէթէ հետիոտն դուրս չելու իբր. միանակ դեսպանատանց փողոցին եւրոպացիները քիչ մը կը քուլեն, երբ հեռաւորութիւնը կարճ ըլլայ:

Ձինական քաղաքին փողոցները նեղ են, մութ ու օձապտոյտ. թաթարական քաղաքին փողոցները լայն են ու փոսերով եզերուած: Տեղ տեղ երթեւեկութիւնը հոծ է, Թիւն-Մէնի դուրս, օրինակի համար, տեսարանը հետաքրքրական է գրեթէ Մայրակաները. ձիերը, ջորիները, մարդիկ իրարու կը հետեւին, կը շատ-

ագ թուղթերը յեզափոխականի գործ չէ, այլ լրատեսներու, ան ալ ճէֆֆիք պէյի զէմ զայն տապալելու համար եղած:

Երանի թէ զիրար ուտեն այդ երկու նշույից արմատ խմբակները:

ԲԱԺ

ԸՆԹԵՐՅԱՐԱՆԻ ՇՈՒՐՁ

Վեց ամիսէ ի վեր բացուած էր վառնայի ընթերցարանը. վարչութեան անդամները չենք կարծեր որ ո եւ է աշխատութիւն խնայած ըլլան գործին յաջողութեանը համար. բայց հակառակ անոնց աշխատութեան կը տեսնենք որ այսօր զարմեալ ցաւօք ստի կը ստիպուին փակել ընթերցարանը. միակ պատճառ ունեւորուի ստակի չգոյութիւնը, բաժնեկիներու անվճար մնալը:

Այս արդէն կապաղուցանէ որ վառնայի ժողովուրդը ընթերցարանի պահանջը չզգար. արամագրութիւն չունի անոր սատարելու:

Ժողովուրդի անուս դասակարգին մէջ ուսում տարածելու նպատակով գիշերային դասասուութեանց ձեռնարկուեցաւ. 6 հոգի միայն փափաքեցան արձանագրուիլ, անոնք ալ երկու շաբաթ. առկից յետոյ ոչ ոք եկաւ. 400 հատորէ աւելի գիրք կը գտնուէր որոնք կարգաւու համար դուրս ալ կը տրուէին. Ազգ. վարժարանի օրերգներէն զատ հազիւ թէ քանի մը հոգիներ կուգային ստանալու, իսկ գոնէ օր մըն հոն երթալ թերթ կամ ո եւ է գիրք կարգալ շատ քիչ, օրական հազիւ 2-3 հոգի կը գտնուէին. պարզ է ուրեմն որ ժողովրդի համար ազգային օգտակար հաստատութեան մը կարգը անցած չէ ընթերցարանը:

Երկու անգամ ընդհանուր ժողովի հրաւեր կարգացուեցաւ որոշում մը տալու համար թէ պէ՞տք էր բաց թողուլ, թէ փակել ընթերցարանը:

Երկու անգամ եւս չորս հոգիէ աւելի մարդ չի գտնուեցաւ ներկայ, ատոնք ալ արդէն ընդհանուր ժողովի պէտքը զգացողներն էին:

Եւ փակուեցաւ ընթերցարանը:

Ընթերցարանի անդամները գոյքերը ամբողջ փոխադրած են Ազգ. վարժարանի սենեակներէն մին, նախապէս հասանութիւնը առնելով հողարարութեան, ուր իբր գարացական գրողարան մը պիտի ծառայէ ընթերցասիրութիւնը զարգացնելու սերունդի մէջ:

Խիստ լաւ նպատակ: Ասկէ աւելի լաւ չէին կրնալ մտածել ընթ. անդամները. սրովեւ տեւ գարոցի մէջ իրենք հսկողի, խնամի վարձքի ծախս չունենալով, պիտի կարողանան հարստացնել գրատունը գարացական օգտակար գիրքերով, որք կը պակսին մեզ ամէն տեղ, եւ նոյն իսկ ուսուցիչներու համար:

Դպրոցական տղակերտները եւս կրնան մասնակցիլ այս ընկերութեան. որոնց շարժական հինգ հինգ սանդղիները պիտի ծառայեն թէ իրենց մտաւոր զարգացման. եւ թէ իրենց սղջատիկ եղբայրներուն դպրոցական պանազան պիտոյնքներ հոգալու:

Աւելի գովելի կը գտնենք մենք այս նպատակը, ինկատի ունենալով որ Ազգ. վարժարանի աշակերտներուն կէսէն աւելին աղքատ դասակարգին կը պատկանին. եւ ասոնց համար ամէն ժամանակ միշտ օգտակար պիտի ըլլայ այսպիսի ձեռնարկ մը:

ՄՈՒՐՍ-ՍՈՎՐԱՍ

ԲԱՑ ՆԱՍԱԿ 8 ԳՈՒՐՈՒԹԵԱՆԻՆ

Թէ Շարժումի եւ թէ իմ հարցումներու օրերով տատանուելէ ետքը հետեւեալ պատասխանը կը ծածմէք:

«Շարժումի 247 թուին մէջ ձեր «ստորագրութեամբ կը յայտարարէք «թէ այդ թերթի Սօֆիայի թղթակիցը ատարիէ մը ի վեր դուք էք, հետեւաբար իմ անձնս զէմ գրուած կարգ մը «հայնոյութեանց հեղինակն էք դուք, «այնպէս չէ»:

«Իմ ալ փնտոածս այդ էր. ասկէ «վերջ ոչ թէ թերթի մէջ այլ պէտք «եղած տեղը կը տեսնուինք»:

Ձեր այդ երկչոտ ու վարանոտ

պատասխանէն կարելի է ենթադրել 1. Դուք բոլորովին կանգնուած չիք այդ կեղտերը արտագրելու տան. որ «թղթակից» ստորագրողը ես՝ Պ. Սիրէմեանն եմ, ճիշդ է արդեօք: — Եթէ ճիշդ է. խոստովանեցէք եւ այդ կեղտը սրբեցէք ձեր թերթին:

2. Դուք գիտէիք որ «թղթակից» ստորագրողը ես եմ. եւ շարագրեցիք ձեր անպատկառ յարձակումները. միայն զիս գրգռելու եւ այդ միջոցով անուս իմանալու համար. ուրիշ կերպ գծուար է մեկնել ձեր «իմ ալ փնտոածս այդ էր» կապուղական պարծանքով արտասանած խօսքերը: Դուք միջոցներ կը փնտոէիք որ ես ինքս խոստովանիմ թէ «թղթակից» ստորագրութիւնը ինձի կը պատկանի «պէտք եղած տեղը տեսնուելու». ոսկայն ստոր համար փոզոցային մարդոց նախընտրած սրամտութիւններուն գիմելու հարկ չը կար. բաւական էր միայն որ փափաք յայտնէինք. մի կարծէք թէ ես պիտի հրաժարէի երբեք անուս հրապարակաւ յայտնելէ:

Ինչ որ է, ձեր ընելիքէն ետ մի կենաք. փնտոածնիդ այդպէս կամ այնպէս գտած էք. Ձր հասկցանք միայն թէ ո՞ր եւ ի՞նչի կը հրաւիրէք տեսնուելու. «Վեհամարտի», պատուոյ ատուանի, թէ զատարանի, կըստասմ, յուսարով սակայն որ ձեր սպանուելիք գործարարութիւնը վերջին դաստատանի օրուան չէք ձգեր:

Բայց հոտ չէ ինչիբր. ես երկրորդ անգամ ըլլալով կը պահանջեմ որ որոշ ու կարող կերպով ըէք՝ ձեր ամբաստանած անձը ես եմ. թէ կայ հոս ուրիշ մէկը, «որ արձակուած է պետական վարժարանէն, իրրեւ իր դասընկերներուն պատուին թշնամի, որուն պատասխանութիւնը պրժգալի եղած է. որ Սօֆիայ պաշտօնատան մը մէջ կը ծառայէ եւ իր պիտաձէի պակասը գոցելու համար իւր զգաւառացի միամիտներ կը շահագործէ յեղափոխութեան անուսով» եւն: կըստասմ:

ՊԵՏՐՈՍ ՄԻՐԷՄՃԵԱՆ

Սօֆիայ, 4 Օգոստոս

—)(—

ՀԱՅՎԱԿԱՆ ԿՐԹԱՐԱՆ ԳԻՇԵՐՈՒԹԻԿ ԵՒ ՑԵՐԵԿԵԱՑ

Վարժարանիս աշակերտ սալ փափաքող պատուարժան ծնողաց կը յայտարարեմ որ, Հայկական կըրթարանի Գ. տարեշրջանը կսկսի յառաջիկայ սեպտեմբեր 1/14ին, միեւնոյն ընդարձակ եւ օղասուն շէնքին մէջ, ատանց փոփոխման ծրագրի եւ անվճարութեամբ միեւնոյն ուսուցչական մարմնոյն, որուն պիտի ընկերանայ նաեւ Ֆրանսացի ընդհանուր հսկող մը:

Լրացուցիչ դասընթացքի աշակերտներուն համար ուսման առարկաներու մեծագոյն մասը պիտի դասասուելի Ֆրանսերէն լեզուով: Գասուածագութեան միեւնոյն եղանակը, աւելի նեղ սահմանի մէջ եւ աստիճանաբար, ի գործ պիտի դրուի բարձրագոյն ու միջին դասընթացքներուն համար ալ:

Ուսմանց ու գիտութեանց բոլոր կարեւոր ճիւղերը կաւանդուին:

Օտար լեզուներէն պարտաւորիչ են Պուլկարիերէնը եւ Ֆրանսերէնը, իսկ կամաւոր են Անգլիերէնը եւ Գերմաներէնը, որոնք պիտի աւանդուին Ֆրանսերէնով:

Չուրթակի եւ դաշնակի դասեր ալ կը տրուին մասնաւոր վճարութեամբով: Գիշերօթիկներու համար ստոյգ անուսը. կատարելով մաքրութիւն եւ ընսանեկան խնամք:

Տարեթոշակներու համար պատրաստ եմ ամէն գիւրութիւն ընծայել, եթէ անոնց կանոնաւոր վճարուած կանխաւ ապահովուի ո՞ր եւ է միջոցաւ:

Հայկական կրթարանի Հիմնադիր-Տնօրէն ԿՐՕՆ ՄԻՐԱՅԷԼԵԱՆ

Յ. Չ. Գ.

Սերոն Բ. Տէրմիճեան, գիտէ ֆրանսերէն, հայերէն, եւ սաճկեռէն գրաչարութիւն ով որ կուզէ թող հաճի իրեն հետ բանակցիլ, հասցէն է «Կայրէթ թերթի խմբագրութիւնը»:

—)(—

պեն. կառուղիները կազաղակեն, ջրերները կահարեկին եւ կը ճախրեն. ազմուկը խլացուցիչ է գրտն նեղ փողին մէջ. Մոնկոլիոյ ուղտերու երկրորդ շարքեր, ծփանուս ստուով մեծ կենդանիներ, կանցնին ու կը խաչաձեւեն գլխար, մեծագոյն մասամբ շրջակայ բլուրներէն հանուած անուսով բեռնաբարձ:

Ձմրան, մոնկոլիները կը խտնուեն մանչուներուն եւ չիներն Բարձրահասակ, պնդակազմ, փոշուով ու աղտեղութեամբ սեւցած, ոչխարի մորթեր հագած, կերթան իրենց ուղտերուն առջև ինկած. կիներնին աղտի կողմէ կը մրցին անոնց հետ. իրենց մազերուն մէջ արծաթէ բաւական լաւ շինուած զարգեր կը կրեն. Եւ այս բոլորը կը թափախ գարշահոտ տիղմերու մէջ կամ կուրացուցիչ վորի ամպեր վեր կը հանէ:

Այս մարդիկ ընդհանրապէս հանգարտարարոյ են, եւ եթէ մեկդի առնւին քանի մը սրախօսութիւններ կամ հեղինական ծիծաղներ. օտարականը անոնցմէ վախնալու բան մը չունի:

Երբեք ամենափոքր դժուարութիւն չունեցայ Բէքինի չինացիներ:

յուն հետ. միմակ, փողոցները թափառող անթիւ չունեցող բրեմն կը ցուցնեն իրենց ժոնիքը. բայց ձեռքը չայժամ մը անոնք իսկոյն խոյս կուտան. Երջականերու գիւղացիները նոյն իսկ հաճոյակատար են. կը փորձեն խօսակցութեան բռնուել հետը. եւ շրջակայ գիւղերը ապահով են բոլորովին:

Ամրան, այդ գիւղերը սիրուն ու մշակուած են. Հոն ձիով պտոյտը միակ գրօսանքն է եւրոպացիներուն. բայց երթալու համար ճամբաները երկար են. դժուարանց եւ քարով լեցուած. անանկ որ բաւական քաջութիւն պէտք է քիչ մը մարտը օգչնչել փորձելու համար:

Երկու քաղաքներուն ընդհանուր տեղքը քայքայուն է ու տխուր. մեծ եւմէնները, տաճարները, սուները աւերակներու կը նմանին. քիչ քացատութեամբ. Այլեւս լոկ ստուերն է Բիէն-Լուսկ մեծ կայսեր փառաւոր քաղաքին, որ կրնար լոկ դատուել Եւրոպայի ժամանակակից ոտաններուն հետ: Գիշերը լուսաւորութիւն չի կայ. յոյսը լուսնին վրայ. կամ ասոր քացակալութեանը, լապտերի մը վրայ դնելու եւ զոր կու-

նենաս դու ազանիդ ծայրն անցուցած:

Բարձր պատեր կը շրջապատեն քաղաքը. թաթարական քաղաքը շերջապատող պարիսպը մեծագոյն ուսած է. բարձր ու 400—500 մէթրը անգամ մը խոչոր աշտարակներով կաշրուած, ուր կը փորուին սրմածակեր որոնք կը պարուսակեն թնդա՝ օթներ. փայտի վրայ նկարուած: Ձեռնական քաղաքին շուրջը շինուած որմերը շատ կարեւորութիւն չունին. անոնց ընդհանուր երկարութիւնն է 21 մղոն. 16 դռներ կը բացուին Բէքինի վրայ. արեւին ծագման կը բացուին եւ արեւամտին կը փակուին. գիշեր ստեն ուրեմն, բնաւ հաղորդակցութիւն չի կայ դուրսի հետ:

Թաթարական քաղաքին մէջ կը գտնուի երրորդ պարիսպ մը, որ կը շրջապատէ կայսերական քաղաքը կամ դեղին քաղաքը: Այն հազուադէպ եւրոպացիները որոնք առանձնաշնորհ: ամբ ունեցած են պարսպապատ քաղաքին մէջ պտըտելու անոր մէկ շատ փոքր մասը կը ճանչնան միայն: Ձինական նոր տարւոյն, գիւսանագիտական մարմնին անդամները կըն-

դուստին կայսեր կողմէ. բայց այն սլանն ուր ունկնդրութիւնը տեղի կուենայ նշանաւոր է իր քայքայուն վիճակովը:

Ձինական քաղաքին մէջ կը գտնուին երկու մեծ դարաստաններ որոնց մին կը բովանդակէ երկնքի մեհեանը, միւսը՝ երկրագործութեան մեհեանը, ուր ամէն տարի կայսրը կերթայ իր ուխտն ընել:

Ուրիշ յիշատակարաններ հազուագիտ են. Համաներուն մեհեանը կայ, Գեդին մեհեանը, գիտարանը ուր կը գտնուին արդրէ սքանչելի գործիներ իսկապէս գեղարուեստական, եւ ամէնը այս է գրէթէ:

Երջերս՝ կառանցիկ ճամբայ մը շինուեցաւ Մաքիա-Բուի կայարանէն մինչեւ դասպանատանց փողոցը. ուստի ձիւրիջիկները երեւան ելան եւ համակ կը մրցին սալակներուն, ձիւրուն եւ էջերուն հետ:

Մէկ խօսքով, Բէքին աղտոտ եւ գարշարոյր քաղաք մըն է որ նախկին շատ իրական մեծութեան հետքերը միայն կը ներկայացնէ:

Հ. Գեթուլ

—)(—

ԱԶԳԱՅԻՆ ԲՐՈՒՆԻԿ

Պոլսէն Եւրոպական թերթե-
րուն քաջուած հեռագիրներն ու
գրուած թղթակցութիւններն՝
ինչպէս նաեւ մեր թղթակցին
նամակները կը հաստատեն Սա-
սունի մէջ կատարուած վերջին
գազանութիւնները :

Թէեւ թուրք կառավարութիւնը
կը ճգնի եղածը սահմանափակել
և պարզ աւազակային խուղար-
կութեան մը հանգամանքը ասլ
անսր, սպաննուածներուն թիւը
մինչեւ 16ի հանելով, սակայն
հիւպատոսական տեղեկութիւն-
ներն և Բաղէշի առաջնորդին
Պատրիարքարան զրկած տեղե-
կագիրը հայ զոհերուն թիւը
600ի կը բարձրացնեն :

Դեռ որոշ կերպով չենք գի-
տեր ամէն մանրամասնութիւն և
թէ ի՞նչ ձեւի տակ կատարուած
է ան : Բայց կերեւի թէ Թուրք
կառավարութիւնը խրախուսուած
Ձինացի պօքսէրներու օրինակէն
և օգտուելով Եւրոպական քա-
ղաքականութեան այժմու քիչ ու
շատ խառնակ վիճակէն, մտադ-
րած է հայկական ջարդերու նոր
շրջան մը բանալ : և ասի լոկ
սկզբնաւորութիւն մը կերեւի :
որ եթէ արձագանք չը գտնէ
Եւրոպայի մէջ և բոլորովին ան-
տեսուի՝ աւելի մեծ շափերով ամ-
բողջացնէ իր ծրագիրը և անաղ-
նուարաւ առանց սպասելու որ
մեր խոհեմ-յեղափոխականները
ժողովուրդը լռիկ պատրաստեն
ու զինեն իրենց . . . պառակտիչ
քարոզներով :

Սակայն թուրք դեսպանները
Եւրոպայի մէջ այսօր բաւական
շուարած դրութեան մէջ են .
Եւրոպական բոլոր կարեւոր թեր-
թերը ընդարձակ նամակներ և
յօդուածներ կը հրատարակեն
հայկական այս նոր կոտորածին
առթիւ, և տէրութեանց ուշա-
գրութիւնը կը հրաւիրեն, որ դեռ
Մայրաքոյնի լրբեւելքի մէջ զեղին
ցեղին կատարած խժգժութիւն-
ները չը պատժուած, ասդին Եւ-
րոպայի կողքին նմանօրինակ
արիւնոտ ընդարձակ տեսարան մը
կը պարզուի :

Վանի Անգլիական հիւպատոսը
այդ գազանութիւնները քննելու
համար զրկուած է Սասուն, և
սպահովարար, հայու օգուտէն
աւելի իր տէրութեան օգուտը
աչքին առաջը ունենալով ասոնց
տակը Ռուսական մատ պիտի են-
թադրէ :

— «Թան» իր 16 օգոստ. (ն. Տ.)
թուոյն մէջ, խմբագրականով մը
իօսելով թրքական այս նոր խժ-
գժութեանց մասին, կըսէ՝ թէ
գիւանագիտական մարմինները
պէտք չէ անուշադիր թողուն
այս գործը, և Ձինական դէպ-
քերը պատճառ մը ըլլալու չեն որ
սպահովութիւնը խանգարուի Հա-
յաստանի մէջ :

«Թան» մասնաւորապէս կը շեշ-
տէ սակեւոր սր դիւտնագէտները
պէտք չէ խարուին թուրք կա-
կառավարութեան սովորական խա-
բեքայական ձեւերէն :

— «Բօլիթիշէ-Քօրէնրօնտէնց»
կը ծանուցանէ՝ թէ Փոքր-Ասիայէ
եկած լուրերուն նայելով, քիւր-
տերը շատ մը բռնաբարութիւն-
ներ գործեր են Բաղէշի նահան-
գին մէջ : Խիզանի մէջ վեց հա-
յեր սպանուեր են և ուրիշ գեղ
մը երեք հայեր սպանուեր են :
Բաղէշի վալիին պաշտօնանկ ըրեք
է Խիզանի կառավարիչը և հրա-
հանգներ տուեր է անոր յաջոր-
դին խստիւ պատժելու համար
յանցաւոր քիւրտերը (.) :

— Բարիզի Արուեստահանդէ-
սին նկարչական բաժնին մէջ
թրքահայ նկարիչներ Չաքարեան
և Շահին ստացեր են ոսկի մի-
տալներ :

Իսկ ճարտարագետական բաժ-
նին մէջ Թահթաճեան ստացեր է
արոյրէ միտալ :

— Խմբագրութեան մէջ ըն-
դունուած են հետեւեալ նոր հրա-
տարակութիւնները :

1. Համալսարանի 5—6 միա-
ցեալ թիւերը հարուստ բովան-
դակութեամբ :
2. «Փարիզի համալսարանային
արուեստահանդէսը 1900» տես-
րակը, «Համալսարան»-էն արտա-
տրուած :
3. «Բնական և բնապատմական
գիտութիւններու ուսուցումը նախ
նական վարժարաններու մէջ»
տետրակը՝ դարձեալ Համալսա-
րանէն արտատրուած :
4. «Սրբազան պատմութիւն
նոր կտակարանի» հրատարակու-
թիւն Պ. Պալեւնց գրատան :

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Թ Ո Ւ Ր Բ Ի Ա

Թուրքիա կը շարունակէ իր
սպառնալիցութիւնները . անց-
եալները գրեցինք, որ 208 թըն-
դանօթ սպասարած է Քրուբի գոր-
ծարանին, «Թայմզ»-էն ալ կի-
մանանք որ թուրք կառավարու-
թիւնը Քիլի «Գերմանիա» ըն-
կերութեան հետ սակարկութեան
մտած է 6 յաճախակ շինել
տալու համար :

— «Թայմզ» կը հեռագրեն Պոլ-
սէն՝ թէ հոն շատ կը խօսուի և
կը քննադատուի եղեր Ֆրանս.
դեսպանին գաղտնի համաձայնու-
թիւնը թուրք կառավարութեան
հետ և իր հպատակներուն վը-
նասները գանձելու համար ընտ-
րած անուղղակի եղանակը, որ
շատ կը տկարացնէ միւս գե-
պաններու դիրքը. մանաւանդ
անոնց՝ որ թուրքիոյ մէջ ճար-
տարարուեստական ձեռնարկու-
թիւն չունին :

— Սուլթանը խնդրեր է գե-
ս-

պաններէն որ Հումայէթօի թաղ-
ման օրը պահակ շոգենաւները
թնդանօթ չարձակեն, չուզեր
եղեր որ իր հպատակները անոնց
ձայնէն վախնան և անհանգիստ
ըլլան :

Ի՞նչ տիպար թագաւոր :
— Սամոսի կառավարիչ իշխան
Վալիանիս ետ կանչուած է Պոլիս
և անոր տեղը նշանակուած է
գլխաւոր դատախազ, Բարաժիխա-
յէլաքի էֆէնտին :

Չ Ի Ն Ա Ս Տ Ա Ն

Վերջին հեռագիրները կը ծա-
նուցանեն թէ դաշնակից բանակը
Բէքին հասեր է յուլիս 31ին :
Արդէն այն արագ ընթացքով ու-
րով դաշնակիցները Թիէն-Չինէն
ճամբայ ելան Բէքինի վրայ քա-
լելու համար, այս պահուս ար-
դէն հասած ըլլալու են, վասն զի
չինացիները որ Բէյ-Չանկի մէջ
ամրացած էին ստակալի դիմա-
դրութեանէ մը և անգին կու-
րուստներ պատճառելէ յետոյ
խոյս տուին : Օգոստ. 6ին (ն. Տ.)
դաշնակիցները կը յառաջանային
մինչեւ Եանկ-Յունկ և յետ երկու
ժամուան թնդանօթաձգութեան
և ընդհանուր յարձակման ի փա-
խուստ կը դարձնէին թշնամի-
ները : Օրուան մը դադարէ յե-
տոյ, Եւրոպական բանակը նորէն
ճամբայ կելլար՝ առջեւէն քչե-
րով չինացիները որոնք զէնքեր-
նին նետելով խոյս կուտային :
Այս ընթացքով դաշնակից բա-
նակը յաղթական կը յառաջանայ
մինչեւ Բէքինի առջեւ, ուր հի-
մակ մտած ըլլալու է վտանգուած
Եւրոպացիները վերջապէս փըր-
կելով :

Բէքինի գրաւմամբ, չինական
խնդրին առաջին շրջանը կը վեր-
ջանայ և այլեւս կը մնայ երկիրը
խաղաղեցնել, վարչական նոր կազ-
մակերպութեամբ մը որով այսու-
հետեւ անկարելի դառնայ ջար-
դերու և արիւնհեղութեանց կրկ-
նութիւնը :

— Շանկայէն կը հեռագրեն թէ
մայր կայսրուհին և Թուան իշ-
խանը Բէքինէն խոյս տուեր են
դէպ հիւսիս, իրենց հետ տա-
նելով չինական բանակին մեծ
մասն ու Պօքսէրները :

— Կըսուի թէ ձաբոն զինադա-
դար առաջարկեր է Ձին կառա-
վարութեան, որ ընդուներ է :

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

«Էքօ տը բարի» գրեթէ
պաշտօնապէս կը հաղորդէ որ
Ռուսիոյ Չարը սեպտ. 2ին կամ
4ին առանձին պիտի այցելէ ար-
ուեստահանդէսը :

— Տէյի-Մէյլի կը հեռագրեն
Լօրէնցօ-Մարքէզէն՝ թէ Թրանս-
վալի Անգլիական հիւպատոսը կը
հաղորդէ որ Օրանժի նախագահ
Շթայն մեռած է :

— Իրեթորիայէն կը հեռա-
գրեն՝ թէ Տըվէդ պօէր զօրավա-

րը յաջողեր է խուսափիլ Քիշ-
նէրի հետապնդումէն : Տըվէթի
բանակէն խոյս տուող անգլիացի
գերի մը կըսէ թէ պօէր զօրա-
պետը 7000 զինուոր ունի իր
արամադրութեան ներքեւ : Սա-
կայն, Լօրէնցօ-Մարքէզէն քաջ-
ուած նոր հեռագիր մը կը ծա-
նուցանէ թէ Տըվէթ գերի բըռ-
նուեր է 4000 զինուորով :

— Վերջերս Պոքրէշի մէջ
սպաննուած բրօքէսէօր ու խմբա-
գիր Միխայիլեանօի խնդիրը ծա-
նոր հանգամանք մը առած է .
Ռուման և Պոլիար կառավարու-
թեանց յարաբերութիւնները
վերջին ծայրն լարուած են :

Ռուման թերթերը սանձարձակ
կը յարձակին Պուլկար ժողո-
վըրդեան և կառավարութեան
վրայ :

Ն Ա Մ Ա Կ Ա Տ Ո Ւ Փ

Տէր Երեւում քահանայ Յով-
հաննէսեանէ կը խնդրուի որ իր
հասցէն հաճի հաղորդել քաղաքս՝
Տէր Սարգիս քահանայ Ղարիպ-
եանի :

Հ Ա Յ Ա Կ Ա Ն Գ Ր Ա Տ Ո Ւ Ն

Պատիւ ունիմ ծանուցանել յար-
գո, յաճախորդներուս, որ գպրոցա-
կան նոր շրջանին համար, ծանօթ
հեղինակներէ, մանկավարժական բո-
լորովին նոր գրութիւններով պատ-
րաստուած գպրոցական գրքեր բերել
տուած եմ : Մեծաքանակ գնումներու
գոհացուցիչ զեղջ, Ո եւ է յանձնա-
րարութիւն անգործագրելի եւ ան-
պատասխան կը մնայ եթէ կանխիկ
սպասարկուած չըլլայ :

Դրստանս հետ հաշիւ ունեցողնե-
րէ կը խնդրուի որ փութան ժամ
առաջ կարգադրել :

Գնում եւ վաճառում ամէն տեսակ
նամակագրոյններու :

Հասցէ՝
A. Zarbhanelian Librarie
Varna (Bulgarie)

ՉՈՒՂԱՐԱՆ «ԿՈՒԹԷՆԳԻՐԿ»
(Տպագրական տաներու)

Կարծր մետաղ . Ոչոյի կարգ
Հաշտարար քարձրոցի

Ամէն լեզուէ տպագրական տաներ
և զանազանք՝ գոհացուցիչ գներով :

Հասցէ՝
Fonderie typographique, Gutenberg,
Sophia, Rue Graff Ignatieff № 3,
5—25

«ՇԱԻԻՂ»

Շաիի ձեռքէ չի ծախուիր, Բաժ-
նեգրին է Պուլկարիոյ համար 10
Քրանք, արտասահմանի համար 12
Քրանք, Ամերիկայի համար 2 1/2 սո-
լար :

Հասցէն՝
Rédaction de la revue «Chavigh»
pensionnat Arménien
Varna

Печатница Хр. Н. Войниговъ—Варна,